Ս. ՂԵՒՈՆԴ ԵՐԷՑ ՎԱՆԱՆԴԱՑԻ

(Շար. տես «Բազմ.» 1951, թ. 11-12 էջ 325)

Գործերու այս սկզբնաւորութենէն վերջ, կարծես իրերու խորը թափանցելով՝ ապագային ըլլալիքներն ալ կը յայտնուէին. երկու այլազէն քաջերու եռեւէն կ'ընթանային ուխտապահ առաքինիները. շահատակներ կը փութային երկրին կարեւոր կողմերը, մոգերու եռեւէն Պարսիկ յառաջապահ գունդն ալ կը հալածէին, օգնական զօրքեր կը ղրկէին երկու դաշնակից ազգերուն, և ամբողջ ձմեռն ու յաջորդ գարունը կը պատրաստուէին մեծ և հուչակելի գործին, որ մինչդեռ քաջ Վարդանի անվեհեր խրախուսանքին համաձայն լոյսով կը վերջանար, աւա՜ղ, սատանան ալ խաւարի մէջ իր խաւարային գործը կը նիւթէր։ Սակայն մութ հնարքներն և ոճիրները որ կատարուեցան, յաւիտենական գիշերով և գարշանքով դատապարտուած կորսուեցան. իսկ լոյսի ծնունդ զաւակներուն առաքինութիւնը լուսապայծառ դարէ ի դար և տարուէ տարի կը ծագի. վասն զի ուր որ եկեղեցին կը սպառազինէ նահատակներ, անմահութեամբ ալ կը կնքէ անոնց ճակատները։ Ոչ, չեմ պատկառիր, չեմ վախնար Վարդանի վերջին գործը կնքել իր իսկ կանխագուշակ այլաբանութեամբ՝ զոր կատարեց Ցազկերտի ատեանին մէջ. «Աստուծոյ օգնութեամբ այնպիսի գործ մը կատարել որ անոր համբաւը պատմուի մինչեւ յաւիտեան Արեաց առջեւ, կայսեր դուռը և բոլոր ազգերուն քով»[30]։ Գործ՝ որ եթէ յաղթութիւն է՝ վեհագոյնն է յաղթութեանց մէջ, և եթէ պարտութիւն՝ փառաւորագոյնը պարտութեանց մէջ. ոչ մէկ տեղ երեւցած է, ոչ մէկ տեղ պանծացուած է, սրբացած և անմահացած է նման եղելութիւն մը, զոր գիտցաւ հայկական հանճարը և անոր եկեղեցին՝ պսակով զարդարել գերագոյն քան ոլիմպիական ձիթենիներով և մրտենիներով, և անթառամ նորոգել տասնըհինգ դարերու անվրէպ տարեդարձով, և նոյն ատենի առերեւոյթ կորուստը փոխել մշտնջենաւոր գիւտի՝ ճշմարիտ հաւատքի համբով։ Շաւարշանի այսպիսի զէպքին և յիշատակին քով ի՞նչ են Սաղամինայի և Պղատէայի պատերազմները. անշուշտ կը յիշէ զանոնք ամէն վիպասէր, ամէն ազգասէր. սակայն ո՞ր Աթենացին է որ այսօր կը ծանէ Թեմիստոկլէսը, կամ կը խնկարկէ Միլտիադէսի. ո՞ր Լակեդեմոնացին է որ պաշտամունք կը կատարէ Թերմոպիլէի կիրճերէն Պլուտոնի քով իջնողներուն համար... իսկ Մեծ և Փոքր Հայաստանի քսան գաւառներու հարազատ որդիքը, ըլլա՛յ հոն, ըլլա՛յ տիեզերքի սփիւռքին մէջ սրբազան պաշտամունքով իսկ լիովին կը ծանեն Վարդանանց, Ատովմանց և Ղեւոնդեանց նահատակութիւնը։

Բայց հոս ուզելով կամ ոչ՝ պէտք է դադրինք այսպիսի սրտաթունդ դրուագէ, և սրտերու և գունդերու կեանք տուողին դարձընենք աչքերնիս, այն մեծ գիշերուան մէջ, որ՝ իմաստունին ըսածին համեմատ, Իսրայելի Եգիպտոսէ ելած գիշերուան նմանելով, յառաջապահեստ էր հազարաւոր Հայերու գերագոյն ելքին՝ երկրաւոր բանակներէն դէպի երկնային կառաները. գիշե՞ր հրաշալի, որ անանցական վաղորդայնը պիտի բանար, Հոգեգալստեան նախընթաց շաբաթ օրը, և ներուի խօսքիս յանդուգն բացատրութեան, այն երեքսըրբեան Հոգին՝ բոլոր հրեղէն լեզուները՝ որ նոյն առաւօտ բաժնեց երկոտասանից և հարիւրքսաններուն, կարծես հոս ամբողջովին հաւաքեր էր Ղեւոնդ երէցի սրտին և լեզուին վրայ. նախ զինքը հրաշինելով, և յետոյ ասոր բերնով Հայ բիւրաւորներու ամբողջ բանակին վրայ տարածուելով, զօրքերու, զօրավարներու և մանաւանդ սպարապետին Կարմիր Վարդանի վրայ, զորս իր երիցակիցները կանուխէն սպառազինած էին ցայգապաշտօն աղօթքներով, իւրաքանչիւրին կարօտութեան համեմատ, աւազանին մկրտութեամբ և հաղորդութեամբ մարմնոյ և արեան Կենարարին։ Ինչ դէպքի մէջ ալ, և երբ ալ խօսէր Ղեւոնդ «մեղրի քաղցրութեան նման արդարին բերնէն կը բխէին խօսքերը՝ որ լսողներուն ցնծութեան պատճառ էր[31]», կ'ըսէ պատմիչը (157). սակայն այն անզուգական պահուն, ինչպէս որ գերազանցօրէն (պատմիչն) ինքը կ'աւելցընէ, վեհագոյն բան մը «ախորժանքով, կը ծանուցանէր զինքը՝ ներքին մարդուն լուսաճաճանչ պայծառութիւնը և հրեշտականման դէմքը»։ Եթէ մինչեւ այն ատեն Հոգին զինքը քահանայական սաորին դասէն կը բարձրացնէր հայրապետական բարձրութեան, հոս չեմ գիտեր ո՞ր բարձրութեան վրայ անուանել զինքը. արդեօք Մովսէսի՞ նման հրեղէն խորաններու մէջ, Յեսուի նման արիացած, Ահարոնի պէս կեանքի և մահուան մէջը մտած, ահեղափայլ դէմքովը երկայնաղէզ հասակովը, խաչը կրելով և սուրը օրհնելով, և համարձակօրէն հռչակելով զինուորներուն, որ՝ թէպէտ ուրիշ ատեն սովորութիւն էր քահանայից շարունակ բանակի մէջ գտնուիլ, բայց կռուի ժամուն դուք զձեզ անոնց աղօթքին յանձնելով ապահով տեղ մը զանոնք կը թողուիք. իսկ այսօր... իբր զէնքով զինուած և կռուի պատրաստուած, կ'ուզեն անոնք ձեզի հետ յարձակիլ և մեռցընել ճշմարտութեան թշնամիները. և եթէ մեռնիլ ալ հարկ ըլլայ, պիտի չվախնան[32]։ — Զեմ գիտեր թէ արդեօք Գաղղիացւոց քահանաներէն կամ եպիսկոպոսներէն մէկը, որոնք՝ զարմանալի զուգադիպութեամբ միեւնոյն տարին և նոյն ամսուան մէջ (յունիս, 451), կը յարդարէին իրենց զօրքը և ժողովուրդը Ատիլասի հրոսակներուն դէմ կռուելու, զարնելու վանելու գանոնք Աւրելիանոյի և Շամփանիայի մէջ, ինչպէս որ ըրին ալ, — խօսեցա՞ւ, գործե՞ց, մահուան դիմագրաւե՞ց Վանանդացի երէցին նման։

Սակայն մահը հոս պատկառեցաւ անկէ. ուրիշ տեղ և ոչ շատ ուշ պատրաստելով իրեն նահատակութեան հանդէսը, նոյնչափ արիութեամբ. հոս թափեց սպառեց Վարդան իր կապարճները և ինկաւ մեռելներուն վրայ. իսկ Ղեւոնդի՞ դեռ կը մնար աղեղնարանել ատեաններու մէջ։ Պատերազմի և զէպքերու օրէնքը ստիպեցին զինքը հիմակ Ցովսէփ հայրապետի և ուրիշ քահանաներու հետ, մեծ պատերազմին վերջանալուն, հրացայտ շրթունքով հանգստեան վերջին աղօթքները կատարել ծաղկի պէս ինկողներուն ծաղկազարդ դաշտին վրայ, լուսաւոր և արտասուալից աչքերը դարձընելով մէյ մը գետին՝ որ կը ծծէր հազար երեսուն քաջերու արիւնը, մէյ մը երկինք՝ որ մէկիկ մէկիկ կը ժողվէր իր պսակազարդ խորաններուն մէջ կարմրերանգ լուսաթեւ հոբաններուն մէջ կարմրերանգ լուսաթեւ հոբաններուն մէջ զիները. և յետոյ ողջ մնացած մեծ գունդի մը հետ ճեղքելով Պարսից ձիաւորներու և փղաւորներու բանակը, կ'ապաստանէր մեծ բերդ մը. ուսկից նոյն արիութեամբ ելլելով եօթը հարիւր քաջեր՝ արեւածագին ապշած թշնամիներուն մէջէն անցկիւղ կ'անցնէին կ'երթային։ Քահանաները հարկ չտեսան անոնց հետ իջնել, բերդին

(30) Փարպեցի, 157.

(31) Փարպեցի, 205.

(32) Եղիշէ, 198.

© National Library of Armenia

մէջ Ճեացողները անմխիթար չթողու համար, բայց միայն սովէն սոսկուած։ Եւ երբ անօրէնները իրենց երդումին դրժելով անոնց սուրթեան հաւատալու բռնադատուողները ջարդեցին, թէպէտեւ կը փափաքէին անոնց հետ կեանքերնին տալ, սակայն իրենց պաշտօնին և հայրենիքի մեծագոյն օգուտը մտածելով, անշուշտ Ղեւոնդի հնարագիտութեամբ Պօղոսի նման թագաւորին բողոքեցին և առժամն ծեծով միայն վարձատրուելով, ղրկուեցան ուր որ ուզեցին։

Ուրիշ տաժանելի ասպարէզ մ՚ալ, համարձակախօսութեան ապացոյց մ՚ալ. կը բացուի անոր առջեւը. թէպէտեւ երկաթեայ ձեռնակապներու մէջ ութսուն օր իր ընկերակիցներով երկար և դժուարին ճամբայ կը կտրէ, սակայն անընկճելի զուարթութեամբ և իրը յաղթող՝ կ՚առաջնորդէ անոնց ուրախութեամբ ծերունի երէցը, վասնզի առաքինօրէն և հաւատքով կատարեց ու գործադրուեցաւ մեծ գործ մը, և բարոյապէս յաղթեց ուխտապահն Հայաստան՝ զոր չէր համարձակեր Պարսիկը ուրիշ անգամ գործել Մազդեզանց կրօնքին հրապոյրով. երկրին իշխաններէն ու ժողովրդենէն մեծ մաս մը, ապահով բերդերու մէջ ամրացած էր. և նահատակներուն արիւնը դրոշմած էր այն դաշտին վրայ Ճեացողներուն հաւատքը. Ղեւոնդի մէջ չկար այն խղճի խայթը՝ ինչ որ մեղադրեցին ոմանք Ս. Բեռնարդոսի՝ երբ ձախողեցաւ Դ. խաչակրութեան արշաւանքը՝ որ իրմէն ալ քարոզուած էր. լրջմտութեամբ ողջունելով կը թողուր եռեւը հայրենիքը, որու փրկութեան սկիզբը կը տեսնէր մտքի աչքով, և կ՚երթար թէեւ կապուած՝ ազատ համարձակ, խնդամիտ և ուրիշները մխիթարելով։

Ո՜հ, որքան հանգիստ և պայծառ է սիրտ մը՝ երբ անբասիր զգայ թէ ընծայած է Աստուծոյ իր երկրպագութիւնը և ընկերին՝ իր սէրը։ Երբ օդը պարզ է, արեւուն շուրջը դարձող մէկ քանի ամպերու ծուէններ ոչ թէ զինքը կը մթնցընեն, այլ և գոյնզգոյն անոր շողերէն վառուելով աւելի գեղեցիկ կը ցուցնեն երկնքի համատարած խորանը, այսպէս էր Վարդանանց յիշատակը Ղեւոնդեանց մտքին մէջ։ Ո՛չափ ասոնցմէ տարբեր էր սեւացեալ գնդին կարաւանը, վռամական ատրուշանին մոխրով և դեռ աւելի՝ իրենց խղճմտանքին անձնատուչոր ծուխով. և ամէնէն աւելի սաստիկ՝ անոնց զլխաւորին՝ թշուառական Վասակին՝ որ նոյն ճամբէն կ՚երթար «մեծ կազմակերպութեամբ», բայց ալէկոծ յոյսով։ Ասոնք՝ որովհետեւ երիվարով կը ճամբորդէին, թէպէտ վերջէն ճամբայ ելան, սակայն հասան կապեալներուն և անարգ ջորիներով ճամբորդողներուն, և անոնցմէ առաջ հասան ժամադրուած տեղը։ Ինչպէս որ կը սպասուէր՝ և նոյնիսկ ակնկալութենէ ալ վեր, սեւացեալներուն և սպիտակներուն հանդիպումը սքանչելի եղաւ, ճամբուն անխուսափելի մէկ կէտին. և քահանաներուն հետ անհրաժեշտ պատահումը. որոնց մէջ ակամայ սարսուռ մը անցաւ երբ մօտեցան ցրտացողներն և ուրացողները, մինչեւ հեգաւոգի Յովսէփ կաթողիկոս ազաւնի միամտութեամբ կը հարցնէր պատգամածին Ղեւոնդիոսի, թէ ինչ պէտք է ընել և ըսել՝ երբ Վասակ մօտենայ յուդայական ողջոյնով։ Իսկ Աստուծոյ մարդը միշտ անվրդով և միշտ պատրաստ՝ յիշեցնելով թէ պէտք չէ զլանալ Աստուծոյ պատուիրած ողջոյնը որո՛ւ ալ ըլլայ, նոյն ինքն Աստուծոյ թողլով որ արժանաւորներուն վրայ իջեցնէ և անարժաններէն հեռացնէ. ինչ որ ինքն ալ «մեծապէս ուրախ սիրով», ինչպէս կը հաւաստէ պատմիչը, կ՚ընդունէր և կուտար Սիւնեաց ուրացեալ նախարարին. այնպէս որ մինչդեռ սա արժանապէս քան թէ կեղծաւորութեամբ կը փութար կ՚իջնէր ձիէն, և կու գար քծնելու Բարձրեալին պաշտօնեաներուն քով, զորս ուրացած էր թէ բերնով և թէ սրտով. և արդեօք ո՛որքան կը դողար սիրտը երբ «Ս. Ղեւոնդ

որու երեսը միշտ ուրախ և զուարթադէմ, ախորժելի խօսքով և լուրջ երկար կը խօսէր Վասակի հետ[33]», այնքան որ եղկելին կարծէր թէ մոռցած ըլլայ, կամ թէ Սուրբերը բնաւ բան մը իմացած չըլլան իր գործած չարիքները, ու քաջալերուած հրաւիրել իսկ զիրենք «նոյն օր իրեն հետ ճաշելու օթեվանին մէջ»։ Բայց արդեօք ո՛որքան սարսուռ զգաց և ալիքները գալարեցան, երբ յանկարծ Աստուծոյ մարդը Ղեւոնդ դէմքը փոխելով և մարգարէական վեհափառ և ահարկու կերպարանքով, իբրեւ անգէտ կը հարցընէր. Դու ո՞ւր կերթաս, Սիւնեաց տէր. և ընդմիջելով անոր թոթովանքը՝ թէ Արեւեաց թագաւորին կ՚երթայ իր աշխատութեան վարձքը ստանալու, կը յաւելուր վստահ բայց և քսամեալի վճիռը, «թէ արդարեւ դու զլուխդ ուսերուդ վրայ ողջ Հայաստան տանիս, այն ատեն թող Աստուած ինծի հետ խօսած չըլլայ». և անմիջապէս այս խօսքին վրայ, «վհատած խզուեցաւ անոր բոլոր անոսի յոյսը, և ըմրոնեց իր զլխուն գալիքը... Վասնզի Սուրբին խօսքը չէր վրիպեր մինչեւ որ ամբողջ կատարուէր[34]»։

Դժուարին է ինձի անմիջական խամրած ու եղծուած երեսը նայիլ չուառական կշտամբուողին, և Ճազկերտի աշխարհագումար ատեանէն առաջ՝ ճամբուն վրայ դատապարտուողին՝ ասուուածակերպ և ասուուածախօս ծերէն, որ կը նմանէր անաչառ Սամուէլի և կայծակնամաքուր Եսայիայի, որոնց պէս իր սրտին պարզութեան մէջ կը տեսնէր Աստուծոյ գաղտնիքները և կու տար անոր պատգամները, մերթ քաղցրութեամբ, և մերթ որոտալով. այսքան գերագանցեց նա երկնային շնորհքներով և արժանաւոր կերպով արդար մարդ, Աստուծոյ մարդ կոչուեցաւ։ Աստուծմէ միայն և ոչ ուրիշ մէկէ պատ-

(33) Ղ. Փարպեցի, 226։
(34) Փարպ., 228։

կառելով, ոչ մէկէ ակնառութիւն ընելով, և ոչ մէկէ մը ակնկալութիւն ունենալով։ Կրնար ուրեմն այսպիսի մէկը, իբրեւ զբօսանքի պարտէզի մը մէջէն՝ կտրել դժուարին ճամբուն երկարութիւնը՝ որ պիտի հանէր աներկրայ նահատակութեան ստադիոնը, և եթէ յաւակնութիւն չէ, կրնար իրեն համար ըսուիլ, Յիսուսի համար ըսուածը, երբ վերջին անգամ Երուսաղէմ կ՚երթար, ուր խաչի մահուամբ պիտի մեռնէր, թէ, «կ՚երթար ուղեկիցներուն առջեւէն, և կը զարմանային իրեն հետեւողները, ու կը վախնային[35]»։

Փութանք մենք ալ իր ետեւէն՝ լսելու վերջին համարձակախօս ատենաբանութիւնը. և նախ ամէնէն աւելի Տիզբոնի արքունական ատեանին վեհաշուք և ահարկու գումարումին, ուր արքայից արքային տեղ կը նախագահէր անոր երկրորդը, բազմահնար և մեր յիշած աղէտներուն պատճառ՝ գոռոզ Միհրներսեհ վզրուկը, որ իր Ճազկերտ տէրը, մանուկի մը պէս ուզածին պէս կը տանէր ու բերէր, և որուն զլուխը պէտք էր կտրել Վասակինէն առաջ, որու համար իսկապէս ատեանը գումարեց, թէպէտ արտաքուստ Հայ կալանաւորներուն համար կը կարծեցնէր. և ասոնց մէջէն քահանաները նախ կանչելով, ահազդեցիկ խօսքերով անոնց վրայ կը ձգէր արքունի ամէն ՁԼաս և անոնց աշխարհին ու մեծ պատերազմին աղէտները, ուսկից վտանգուեցան երկու կողմերն ալ, – (չկրցաւ կարծեմ խոստովանիլ որ եթէ ոչ եօթնպատիկ՝ այլ եռապատիկ քան Հայերունը եղաւ Պարսիկներու կոտորածը), և կեղծաւորութեամբ կ՚ողբար մանաւանդ Վարդանի կորուստը, անփոխարինելի քաջ մը հռչակելով և նախանձելի կայսրներուն անգամ. ուրիշ շատ սպառնալիքներ մեծարանելով կը

(35) Մարկոս, ԺԳ. 32։

© National Library of Armenia

փքար։ Այն ատեն, իմաստունին նկարագրածին պէս, առաջ անցաւ արդար մարդը՝ «մեծ համարձակութեամբ՝ զինքը չարչարողներուն դիմաց և անոնց՝ որ իր գործերը կը դատափետէին[36]»։ Առաջ անցնելով ուրեմն Աստուծոյ մարդը Ղեւոնդ[37], ոչ միայն իր անսասանելի լրջմտութեամբ, այլ և իբրեւ հանդիսադիր մը, աւագ անձերու հանդիսաւոր ընդունելութեան, աշխարհային օրէնքին համաձայն, մատնանշելով ամէնէն առաջ «կը ներկայացնէր, մի առ մի ընկերները թէ ո՞վ է, ինչ է անունը, և քրիստոնէական կարգի համեմատ ինչ աստիճանի պատիւ կը կրէ... Ս. Յովսէփի համար կ՚ըսէր... թէպէտ տարիքով ինծմէ փոքր է, սակայն պատիւով բարձր է արժանապէս, և գլուխ է բոլոր Հայոց քահանայութեան... Սահակ՝ ձեռնադրութեան օծման կարգը՝ կատարելապէս ունի. իսկ միւսները և ես՝ հաւասար ենք քահանայութեան կարգով»։ և կ՚աւելցնէր թէ ասոնք եկեղեցւոյ և մարդոց օրէնքին համեմատ՝ սակայն Աստուծոյ աչքին՝ անիկա է մեծ՝ որ առաքինութեամբ կը գերազանցէ։ Անկէ վերջ, իր արիական ձայնը բարձրացնելով՝ զոռոզ վգրուկին արժանի յանդիմանական պատասխանը կու տար՝ ջատագովելով ինչ որ ըրած էր ինքը ընկերներովը, և կը վերջացնէր, թէ «ուրախ ենք մեր գործածներուն վրայ և կը ցնծանք»։ կը հերքէր ոմանց սխալ կարծիքը, որպէս թէ թուէին «վախով և ոչ ուրախութեամբ կենալ ձեր ահաւորութեան առջեւ»։ Եւ խօսքին վերջ կը դնէր յանդիմանելով անոնց անզգայուրիւնը կրակի պաշտօնին մէջ, և Հայերուն հետ անհանճար վարչութեան համար. ուսկից զգուելով Վարդան՝ զոր քիչ առաջ գովեցինք, և ընկերները, բողոքեցին, և լսելի չըլլալնուն՝ «իրենք զիրենք մահուան նուիրեցին և պսակուեցան. մենք ալ քաշալերողներն էինք, և իրօք ճշմարիտ վարդապետներ»։

Ես ալ կը սիրուիմ նոյն բանը կրկնել քու մասիդ, Տէր իմ Ղեւոնդիէ, արդարեւ ճշմարիտ վարդապետ էիր և արժանաւոր երեւցար անոնց որ քեզի լսել կը սիրէին, և արդարեւ ճշմարիտ աշակերտ տիեզերքի Վարդապետին, այստեղ անոր հրամանը կատարելով. դատաւորներու և թագաւորներու առջեւ կեցած ատեն չվախնալ և կանուխէն չհոգալ ու չմտածել «թէ ի՞նչ պիտի խօսիք. այլ ինչ որ պիտի տրուի ձեզի այն ժամուն՝ զայն կը խօսիք, որովհետեւ դուք չէք որ պիտի խօսիք, այլ Հոգին Սուրբ»։

Արդարեւ Աստուծոյ հոգին խօսեցաւ Ղեւոնդի հրեղէն բերնով, և այնպէս հրաշինեց և սքանչացուց անոր ընկերակիցները, որ, եթէ չէին կրնար համբուրել անոր հոգերուն շրթունքները, միաբերան շնորհակալ եղան և գովեցին իրենց ախոյեանը «մեծաձայն աղաղակով, և շատ ուրախացան[38]»։

Իսկ ի՞նչ կ՚ըլլար արդեօք Միհրներսեհ, որ ամբողջ կեանքին մէջ լսած չէր այսպիսի զօրաւոր դիմաբանութիւն և կշտամբանք. և մինչ կը համարէր թէ ուրիշները կը տոչորէր իր սարսափով՝ ինքը բռնկեցաւ բարկութեան կրակով՝ և տեղն էր հոս Եղիշէի հետ հարցընել երգիծանքով. «Արդ, զի՞ կոծիս, զի՞ մրցիս, զի՞ այրիս, զի՞ բորբոքիս, զի՞ չշիջանիս, զի՞ ի խորհուրդ կոչեա» քու մոլորութեանդ համախոհները։ Բայց ան գիտցաւ դեռ քիչ մը համբերել. և կիսաբաց աչքերը դարձընելով Ղեւոնդի շլացնող երեսէն, կը հարցընէր ընկերներուն. Ձեր կարծիքն ալ նո՞յն է, ինչ որ այդ մահապարտը համարձակ և աներկիւղ յանդգնեցաւ ըսել մեր առջեւ»։ Կաթողիկոսը, եպիսկոպոսը և ուրիշներ միաբերան վկայեցին թէ նոյն մտքին վրայ են, վասն զի «Այն ամէն խօսք և պատասխան, իրեն արդուրեան արժանաւոր կերպով ըրաւ, քաջալերուած Աստուծոյ օգնութենէն Տէր Ղեւոնդ ըստ աստուածաշնորհ իր գիտութեան, գեղեցիկ կերպով պարզեց ձեր առջեւը... իսկ դու դառնացած՝ զայրացած ըլլալուդ զանիկա թշնամանեցիր. – մինչդեռ դուք էք շատ եպերանքի արժանի[39]։ Ահաւասիկ Ս. Հոգւոյն ներգործութեան զօրութիւնը՝ որ Ղեւոնդի հոգեկան ընկերներուն մաքուր սրտերուն մէջ անցաւ։

Այնուհետեւ ի՞նչ պատասխան կրնար տալ մարդ այդպիսի անդիմադարձ խօսքերու։ Հնարագիտ այդ երիտասարդին վգրուկը ուրիշ բան չգտաւ ըսելու, բայց ինչ որ սովոր է աշխարհ ճշմարտախօսներուն հատուցանել, – հրամայեց ճշմարիտը ճառող բերանները ծեծել շղթաներով սաստկօրէն, այնքան որ արիւնով լեցուելով դուրս կը թափէր[40], և բանտ վերադարձընել. ուսկից քանի մը օր վերջ կրկին կանչուեցան քահանայութեան երեք զըլխաւորները Վասակայ դատաստանի հարցափորձին։ Հոս Արշաւիրի լուրջ ամբաստանութենէն վերջ, այս անգամ խօսեցաւ Ս. Սահակ եպիսկոպոս, գուցէ թելադրութեամբ Ղեւոնդի, որ իր խօսքերը ուրիշ ատեանի մէջ ալ իրեն թարգմանել կու տար պարսկերէնի, որուն անզէտ էր. և բոլոր այս դատերուն եզրակացութիւն կ՚ըլլար Սիւնեաց իշխանին դատապարտութիւնը և ողորմելի մահը օտարութեան և բանտի մէջ, «համաձայն Ս. Ղեւոնդի խօսքին», ինչպէս որ կը յիշեցնէ պատմիչը։ Մեր սուրբը չկրցաւ մոլորեալը կորուստէ փրկել. ամենակարող Յիսուսի ալ շնորհուեցաւ ազատել Յուդան, որուն գործերը վճռեցին երթալ իր տեղը։ Բայց ինչպէս որ նոյն ատեն մատնիչին տեղը լրացուց հալածիչ մը, ընտրութեան անօթի փոխուելով, այսպէս ալ հոս ուրացողին տեղը կը լրացնէր Սուրբերու նոր հալածիչը՝ պարսիկ կրօնքին վարպետ մոգպետը, Ապար աշխարհի Նիւշապուհ քաղաքին մէջ, ուր քշուեցան բոլոր շղթայի զարնուած քահանաները՝ անդառնալիօրէն, իսկ իշխանները՝ մինչեւ ատեն մը։

Կարծես հակառակութեան մեծ վէճ մը տեղի կ՚ունենար այն ատեն ընդ մէջ երկնքի և երկրիս կամ դժոխքի հետ՝ Հայոց քաջերուն նկատմամբ, որովհետեւ ինչ որ նախանձով ասոնց դէմ կը դաւէին թշնամիները, երկնաւոր պաշտպանները անոնց գլխուն կը դարձնէին։ – Յազկերտ կամ իր խրատատուն կ՚երազէին նախ կրակի պաշտամունքով նուաճել վերջնականօրէն Հայաստանը, և յետոյ զէնքի ուժով. և հասկցան խայտառակաբար թէ Քրիստոսը և հայրենիքը ճշմարիտ սիրողներուն վնաս մը չեն կրնար հասցնել ոչ մոգերու բազմութիւնը ոչ ալ փիղերու գազանութիւնը։ Վասակ մինչեւ Հայոց թագաւորութեան աչք տնկած էր, և ընդհակառակն անարգօրէն քան ամէն Հայ մարդ՝ նուաստացած օտարութեան մէջ կը մեռնէր։ Խստապահանջ և մահաշշուկ ընդհանուր ատեանին մէջ Միհրներսեհ յամառ յոյսով կը հրապուրէր քահանաները, անոնց սայթաքումով խափանելու բանտարկուած իշխանները, մինչդեռ անոնք աւելի համարձակութիւն առին և ասոնք քաջալերուեցան։ Ու հիմա, իբր վերջին փորձ, մեր եկեղեցւոյ նուիրապետները կը մատնէր մոգպետին ձեռքը, որ իրենց զենին գիտութեամբ և ամրապինդ կապուած ըլլալով իր ազանդին՝ կը գերազանցէր իր նմանները, և բաց ասոր, քաղաքական իշխանութիւն ալ ունէր մեծ գաւառի մը վրայ, և դատելու իրաւունք մեր Սուրբերուն

(36) Իմաստ. Սողոմոնի Ե. 1։
(37) Փարպ. 234։
(38) Փարպեցի, 289։
(39) Փարպեցի, 241։
(40) Նոյն, անդ։

© National Library of Armenia

վրայ, որոնք շատ աւելի կը նեղէր ու կը տանջէր, իր խիստ բնաւորութեամբ, քառասուն օր մութ և խոնաւ բանտին գետնափորին մէջ, կնքելով երդիքն ու զռնեը, որպէսզի ոչ ոք մտնէ և բան մը բերէ անոնց, այլ լոկ հաց ու ջուր, ան ալ ագահօրէն չափաւորելով։ Սակայն Նախախնամութիւնը ոչ միայն ասոր ըրածները պարապի հանեց, այլ նաեւ նոյն արգիլուած երդիքէն ճշմարտութեան լոյս ծագեց, և կնքուած զռնէն մուտ ինքը մոգպետը վկայ ըլլալու մաքուր սրտերու անդորրութեան, որ հանգիստ քունի տեն իսկ կը տարածուէր իր ձեռքով խոշտանգուածներու դէմքերուն վրայ. և իր դատարկաբան բերանն ալ կը ստիպուէր պատմելու անոնց վրայ տեսած սքանչելիքը։ Եւ ահա նոյն տեղ՝ ամէն բանի մէջ յառաջադէմը՝ Ղեւոնդ երէց, կու տար ա. նոր ընդունելութեան ողջոյնը, և համաձայն բուռն եռանդին՝ որ Աստուծոյ ճամբուն մէջ երբեք ետ կենալ չի գիտեր՝ կը ստիպէր կը մղէր ըսելով. «Փութա, մի հեղգար, գուցէ նորէն կուրնաս ու մութի մէջ քալես[41]»։ Իրօք ալ փութաց ան, մանաւանդ թէ կանխեց քան իր յանկարծագիւտ վարդապետները և առաւ նահատակութեան զրաւականը։

(Շարունակելի)

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ

Թրգ. Հ. ՊԵՐՕԷԼ Վ. ՉՐԱՔԵԱՆ

(41) Եղիշէ, 242.

ՊԱՏԱՍԽԱՆ

Նամակդ առի։ Բայց նամակ չէր, սիրելիս,
Այդ քու հոգիդ էր սարսռոտ,
Որ իբրեւ մի օդայած սէր, քնքշութիւն,
Ինձ կը հասնէր թեւարախ։
Ո՜հ, վերապրում հոգեկան,
Ո՜հ, անցեալի մը շքեղ
Ապարանքը մարմարեայ,
Որ կը կանգնէր վերբսաին։
Յուշե՞ր, յուշե՞ր, անապատէն ալ անդին,
Միշտ արեւոտ, և ջերմութեամբ անընպատ
Սիրոյս քեզմով կը լրնուր,
Ու ես հըպարտ, ու ես յանկարծ երջանիկ,
Յաւերս ամէն մոռնալով
Քեզի, հոգիս, այս պատասխանը գրեցի։
Նամակդ ափիս մէջ կը դողար, սիրելիս,
Կարծես ըլլար սիրարդ խանդոտ անոր վրան,
Թուղթն՝ աչքերուդ ժըպիտին
Որպէս թարգման անկեղծիկ՝
Հորիզոններ կարելով
Ինչպէս սիրոյ ազատնակ,
Կու տար հրաւէր ինձ կեանքի։
Պիտի ապրիմ ես քեզմով,
Եւ դուն ինծմով պիտի մեծնաս, անհունանաս։

ԱՐՄԱՒԻՐԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ԶՈՒԳԱԴԻՊՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՍՈՒՐ ՔՈ՝ ԵՒ ՍՈՒՐ ՄԵՐ»

«Բազմավէպ»ի այս տարուան Սեպտեմբեր–Հոկտեմբերի թիւին մէջ, աչքիս զարկաւ հատուած մը, Հ. Յակոբ Զանթայեանի գրուածքին խորագիրին վրայ։

«Վարդանանց Պատերազմի Առթիւ Խորհրդածութիւններ» վերնագրին՝ Զ. բաժնին մէջ միայն՝ ան կը գրէ. – «Սուր քո՝ եւ ... սուր մեր»։ Իսկ ուսումնասիրութեան ընթացքին, Զ. բաժնին մէջ, այդ մասին ո՛չ մէկ խօսք։ Մինչդեռ, Դ. բաժնին մէջ, այդ խօսքին ճիշդ պատմական ձեւը միայն յիշուած է իրմէ։ Այսինքն, «Սուր քո՝ եւ պարանոց մեր»։

Արդ, Գահիրէի Հայ Գեղարուեստասիրաց Միութեան Վարչութիւնը, 1950–ի Յուլիսին, Թերթերու մէջ բացած էր թատերական մրցանք մը, Վարդանանցի 1500–ամեակին առիթովը։

Ես մասնակցած էի այդ մրցումին։ Անմիջապէս գրկեր էի՝ կանուխէն իմ խմբագրած բեմախաղը. – ՎԱՐԴԱՆԱՆՔ, Երեք Արար։ Այդ թատերակիս մէջ, կարծեմ առաջին անգամ ըլլալով, հրապարակ դրուած էր, «Սուր քո՝ եւ սուր մե՛ր» առնական ձեւը։ Եւ այդ՝ Սպարապետ Վարդանի բերա՛նը դրուած, ի՛մ կողմէ։ Ի՞նչպէս. —

Երկրորդ Արարիս մէջ, Արտաշատի ժողովին, երբ հայ մեծերը կը խմբագրեն Յաղկերտի հրամանագրին տալիք իրենց պատասխանագիրը, Յովսէփ Կաթուղիկոսը կը թելադրէ եւ Ղեւոնդ Երէց կը գրէ։ Երբոր կը հասնին այն կէտին՝ ուր կ'ըսուի՝ «Սուր քո եւ պարանոց մեր», Վարդան կ'ընդմիջէ, – իմ թատերակիս ցուցմունքովը –, ու կ'ըսէ. –

Վայրկեա՛ն մը..., Վեհափա՛ռ Հայրապետ, չնո՞ր հ...։ Այդ վերջին խօսքը՝ ո՛չ...։ Անոր տեղը՝ «Սուր քո՝ սուր եւ մե՛ր...»։ Ճիշդ է, առաջինին պէս քրիստոնէական չէ՛ այս ձեւը։ Պիտի ըսէք նոյնիսկ՝ մովսիսական է, – «Ակն ընդ ակն եւ ատամն ընդ ատամն». եւ այլն»։ Ու Վահան Ամատունիի բերնով ալ՝ ամրացուցա՛ծ եմ այդ առողջ սկզբունքը. —

— «ՎԱՀԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ (ընդմիջելով), Իրաւո՛ւնք ունի Մամիկոնէից Տէրը, մեր խաչապաշտ մեծ նախնեաց խո՛սքն է. – «Խաչը զօրաւոր՝ տէ՛ր կ'ընէ»։ Մոգերու սուրին դէմ, խաչո՛վ զօրացած ստո՛ւր եւ մեր...։ Մենք մեր հաւատքէն չենք խախտիր, բայց սուրի դէմ ալ՝ մեր պարանոցը չե՛նք երկարեր»։

Ու դեռ ամրապնդած եմ այդ սկզբունքը՝ նաեւ ժողովին ներկայ եղող Նախարարներուն բերնովը. —

— «ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ (ոգեւոր ու միաձայն), Այո՛, այո՛, Սուր քո, սուր եւ մեր...»։

Կաթուղիկոսն ալ կ'ըսէ զոհունակ, — Ապրի՛ք, Սպարապե՛տ եւ իշխանե՛ր, համակարծի՛ք է ձեզի՝ ձեր հոգեւոր պետը։ Ղեւո՛նդ Երէց, գրէ ա՛յդպէս. — «Սուր քո, սուր եւ մե՛ր...»։ Աւելի՛ առնական ու մարդկային է, որչափ տեն որ գայլերո՛վ պաշարուած ըլլայ մարդկութիւնը...»։

Արդ, Բազմավէպ–ի մէջ, Հ. Յակոբ

© National Library of Armenia